ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ԱՄ-2019/42 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲԻՑ ՍԿՍԼԵՈՒ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10, 17.04.2019թ.

Բողոքբերողանձ՝ «Բի էլ գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ

Գնման առարկան՝ ՀՊՄՀ մասնաշենքերի և բակային տարածքների մաքրման ծառայություններ

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անհապաղ տրամադրել «Արիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեններ:

2. Դադարեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2019թ. կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ժ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ "Բի էլ գրուպ" ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռիգայի 126/4, բն.52
Հեռ: 093550555
էլ.փոստ՝ info@clean.am

Պատվիրատու՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան»
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 17 շենք

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՊՄՀ մասնաշենքերի և բակային տարածքների մաքրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ

Բ ո ղ ո ք

- *Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՊՄՀ մասնաշենքերի և բակային տարածքների մաքրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն և «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր):

«ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2/ա կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն, իսկ Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն:

Իսկ արդեն www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ առանց գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատելու արձանագրության՝ 29.03.2019թ. հրապարակվել է

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 13050-19
«05» 04 2019թ.

Պայմանագիր կնքելու մասին հայտարարություն /սահմանվելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ/:

- *Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, *թափանցիկ,* համաչափ, *հրապարակային* և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:*

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ *պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:*

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:*

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման համաձայն /կցվում է/՝ <<Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ հայտնում ենք, որ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ *ներառյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները* հանձնաժողովի քարտուղարի կողմից անհապաղ պետք է տրամադրվեն նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին>>:

29.03.2019թ. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով դիմել է տեղեկատվություն տնօրինող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բարտուղարին՝ խնդրելով տրամադրել իրեն «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը /համապատասխան ապացույցը կցվում է/:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բարտուղարը 29.03.2019թ. ներկայացված որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջին պատասխանել է միայն 04.04.2019թ. /կցվում

է՝ ներկայացնելով գրություն, ըստ որի մերժում է Ընկերության կողմից ներկայացված դիմումը՝ արդդպես և չտրամադրելով «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն փաստացիորեն զրկվել է հնարավորությունից գնահատելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած ենթադրյալ որոշումը՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և վերջինիս հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ավելին, Ընկերության կողմից ներկայացված դիմումը՝ պահանջված փաստաթղթերը Ընկերությանը չներկայացնելով, ստեղծել է մի իրավիճակ, երբ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ 29.03.2019թ. պահանջելով փաստաթղթերը և այդպես էլ չստանալով՝ զրկվել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իր իրավունքը իրացնելու հնարավորությունից:

Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ գնահատող հանձնաժողովը կարծես թե միտումնավոր չի հրապարակում որակավորման փաստաթղթերի գնահատման արձանագրությունը և երբ որակավորման փաստաթղթերը տրամադրելու պահանջ ներկայացնելու դեպքում նաև չի ներկայացնում փաստաթղթերը նման պահանջ ներկայացնող մասնակցին, ապա այս պարագայում գտնում ենք, որ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնումների գործընթացի *թափանցիկ և հրապարակային* հիմունքներով կազմակերպման սկզբունքը, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուր անձի իրավունքը ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է Օրենքի 46 -րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքը իրացնելը խախտմանը և զրել մասնակցին համապատասխան հիմքեր հայտնաբերելու դեպքում վիճարկելու «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անհապաղ տրամադրել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով

նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերի (ներառյալ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:

2. Դադարեցնել «ՀՊՄՀ-ԲՄՕՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի մարտի 27-ին կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Առդիր՝ 10 թերթ:

Հարգանքներով

«Ռի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն _____ Արմեն Կարա-Պողոսյան

<< 05 >> ապրիլ 2019թ.